

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՒՆԻՍԻ 25-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱ-
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱ-
ԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱ-
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅՈՒ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

5 նոյեմբերի 2013թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Նարոյթունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի,
Ա. Խաչատրյանի, Վ. Նովիաննիսյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Նանրապետու-
թյան Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասարանի Նանրապետության
պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ
հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական
դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ
հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի
հունիսի 25-ին Երևանում ստորագրված՝ Նայասարանի Նանրապետության եւ
Ռուսաստանի Դաշնության միջեւ ռազմաբեխնիկական համագործակցության
զարգացման մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝
Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության
հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝
18.09.2013թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապե-
տության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը,
հետազոտելով քննության առարկա պայմանագիրը եւ գործում առկա մյուս
փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը
Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Պայմանագիրն ստորագրվել է 2013թ. հունիսի 25-ին Երեւանում՝ երկու
երկրների զինված ուժերը, այլ զորքերը, զինվորական խմբավորումները, իրավապահ
մարմինները, հատուկ ծառայությունները եւ զորքերի (ուժերի) փարաձառյուղանային
խմբավորումները սպառազինության բարձր արդյունավետության ու հեռանկարային
համակարգերով համալրելու եւ հավաքական անվտանգության համակարգը
տեխնիկական փարթով կազմավորելու նպատակով:

2. Պայմանագիրն ստորագրելիս հաշվի են առնվել «Նայաստանի Նանրա-
պետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ
ռազմատեխնիկական համագործակցության մասին» 2003թ. հունվարի 17-ին
Մոսկվայում ստորագրված միջկառավարական համաձայնագրի դրույթները
(Նայաստանի Նանրապետությունն այն վավերացրել է 2003 թվականի մարտի 26-ին):

3. Պայմանագրով սահմանվում է ռազմական նշանակության արտադրանքի
մատակարարման իրականացման կարգը, որը ներառում է սպառազինություն,
ռազմական տեխնիկա, աշխատանքներ եւ ծառայություններ, մտավոր գործունեու-
թյան արդյունքներ, այդ թվում՝ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքներ եւ
ռազմական ոլորտի տեղեկատվություն:

4. Պայմանագրով Նայաստանի Նանրապետությունն ստանձնում է, մասնա-
վորապես, հետեւյալ պարտավորությունները.

- ապահովել ռազմական նշանակության արտադրանքի մատակարարում-
ների իրականացումը լիազորված կազմակերպությունների կնքած պայմանագրերով՝
առանց ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման (արտահանման)
լիցենզիայի փրամադրման,

- ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումն իրականաց-
նել այն նույն բնութագրերով եւ նույն համալրմամբ, որով իրականացվում է իր
սեփական ազգային զինված ուժերի, այլ զորքերի, զինվորական կազմավորումների,
իրավապահ մարմինների եւ հատուկ ծառայությունների համար,

- պեղական գաղտնիք պարունակող ռազմական նշանակության արտադրանքի մատակարարման համար պայմանագրերի կնքումն իրականացնել օրենսդրության համաձայն եւ «Նայաստանի Նանրապեղության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ գաղտնի տեղեկատվության փոխադարձաբար պաշտպանության մասին» 2002թ. նոյեմբերի 5-ի համաձայնագրի դրույթներով,

- ռազմական նշանակության արտադրանքը մյուս երկրի մաքսային փարածք տեղափոխել համապատասխան լիազորված մարմինների կողմից փրված ռազմական նշանակության արտադրանքի մատակարարման հաստատված անվանացանկերից քաղվածքներով՝ դրանք ազատելով մաքսային վճարներից,

- արտադրանքը մատակարարող կողմի համար ապահովել անհրաժեշտ պայմաններ՝ ռազմական նշանակության արտադրանքի առկայության եւ նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնելու համար,

- ապահովել ռազմատեխնիկական համագործակցության ընթացքում օգտագործվող եւ ստացվող մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների պաշտպանությունը՝ «Նայաստանի Նանրապեղության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ երկկողմ ռազմատեխնիկական համագործակցության ընթացքում օգտագործվող եւ ստացվող մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների փոխադարձ պաշտպանության մասին» 2005թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրի դրույթներին համապատասխան,

- ապահովել ռազմատեխնիկական աջակցություն մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի ընդունման եւ որակի վերահսկողության մասով,

- առանց մատակարարող կողմի նախնական գրավոր համաձայնության՝ չվաճառել եւ չփոխանցել երրորդ կողմին ռազմական նշանակության արտադրանք, դրա վերաբերյալ գիտական եւ տեխնիկական տեղեկատվություն, հեղափոխությունների արդյունքներ, ինչպես նաեւ գյուտեր, նոու-հաու եւ այլ տեղեկություններ:

5. Պայմանագրով սահմանված են նաեւ դրա ուժի մեջ մտնելու կարգն ու պայմանները, գործողության ժամկետը, դրանում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու կարգն ու պայմանները, ինչպես նաեւ պայմանագրի կիրառման եւ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերի լուծման կարգը, որոնք համահունչ են միջազգային իրավական ակտերին ներկայացվող պահանջներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2013 թվականի հունիսի 25-ին Երեւանում ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ ռազմաքիմիկական համագործակցության զարգացման մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՎՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

5 նոյեմբերի 2013 թվականի
ՍԴՈ-1123